որպիսի ձևով հարստահարում են խեղճ գիւղացիութեան, գաղափար տալու համար Քեզ, այստեղ ես առաջ կը բերեմ նրանց ապօրինի գրաւումների մի ցուցակը, որը կազմել եմ գիւղի քէդխուդայի տուած տեղեկութիւնից.

1918 թւին վերցրել են վանքապատկան գիւղացիներից —

500 հաւ. 1000 հաւկիթ. 20 ոչխար.
100 բեռ յարդ. 100 բեռ եօնջա.

Տարիների հարստահարութիւնից նրանք դիզել են մեծ հարստութիւն. այժմ նրանք ունեն մեծ քանակութեամբ ձիեր, ոչխարներ և գեղեցիկ մի բերդ, որի մօտ փուած է պարտէզը։ Ունեն նաև մի քաղնիք։

— Տեսնում ես գեղեցիկ պտղատու ծառերով զարդարուած այդ պարտէզը, — ցոյց տուեց քէդխուդա պ. Մ.ն, դա Ֆարաջենք են իւրացրել։

Այսպէս, շնորհիւ Ֆարաջենց ոտնձգութիւնների՝ խաղաղ աշխատաւոր գիւղացիութիւնն արագ կերպով քայքայւում ու զրկւում է ապրուստի միջոցներից։ Այս տիւր երևոյթի վրայ աւելացնենք գողութիւններն ու աւազակային ալան-թալանը, որն օրըստօրէ լայն ծաւալ է ստանում և զգալի հարուածներ հասցնում առանց այն էլ տանջւող գիւղացիութեանը։ Այսպէս, 1918 թւին Ամիր աւազակը հանդից տանում է ութը ոչխար։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Ադքատ	40
2	Զունեոր	30
3	Միջակ	76
4	Ունեոր	20
5	Հարուստ	20
	Ընդամենը	186

ԴՐԱԽՏԱԿ

Զիգանից դէպի հիւսիս, կէս ֆարսախ հեռու, մի տափարակի վրայ փուած է հայաբնակ Դրախտակ գիւղը, որը